ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀ

ք. Երևան «26» մարտի, 2019 թ.

ՀՐԱՄԱՆ № 11-Ա/Ք

ՀՀ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ 2020-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ վարչապետի 2019 թ. մարտի 22-ի «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի բյուջետային գործընթացն սկսելու մասին» N 289-Ա որոշումով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. ՀՀ գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի 2020-2022 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի (այսուհետ՝ ՄԺԾԾ) և 2020 թ. պետական բյուջեի նախագծերի մշակման նպատակով ստեղծել աշխատանքային խումբ (այսուհետ՝ աշխատանքային խումբ) հետևյալ կազմով՝

1) Լ. Մարդոյան՝ ՀՀ ԿԳՆ ԳԿ գլխավոր քարտուղար, աշխատանքային խմբի ղեկավար,

2) Ա. Ջավադյան՝ ՀՀ ԿԳՆ ԳԿ գիտական քաղաքականության վարչության պետ,

3) Կ. Ղարիբյան՝ ՀՀ ԿԳՆ ԳԿ գիտական քաղաքականության և զարգացման ծրագրերի բաժնի պետ,

4) Ռ. Ասատրյան՝ ՀՀ ԿԳՆ ԳԿ գիտական գործունեության կազմակերպման վարչության պետ,

5) Ա. Հովհաննիսյան՝ ՀՀ ԿԳՆ ԳԿ գիտական ծրագրերի իրականացման աջակցության բաժնի պետ,

6) Տ. Գալստյան՝ ՀՀ ԿԳՆ ԳԿ ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնի պետ,

7) Մ. Ազիզյան՝ ՀՀ ԿԳՆ ԳԿ ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ:

Աշխատանքային խմբին՝

1) ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի նախագահին ներկայացնել՝

ա. ՀՀ գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի 2020-2022 թթ. ՄԺԾԾ համար ստացված և մշակված հայտերը, ինչպես նաև 2020-2022 թթ. ժամանակահատվածի համար ոլորտում իրականացվելիք քաղաքականությունը շարադրող փաստաթուղթը (ներառյալ դրանով պայմանավորված ՀՀ 2020-2022 թթ. պետական բյուջեների ծախսերի գծով առաջարկությունները)՝ մինչև 2019 թ. ապրիլի 10-ը,

բ. ավարտուն տեսքի բերված ՀՀ գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի 2020-2022 թթ. ՄԺԾԾ նախագիծը՝ մինչև 2019 թ. ապրիլի 30-ը,

գ. ՀՀ 2020 թ. պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի, ինչպես նաև ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի կառավարման ապարատի բյուջեի նախագծերը՝ մինչև 2019 թ. ապրիլի 30-ը.

2) ՀՀ գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի 2020-2022 թթ. ՄԺԾԾ և 2020 թ. պետական բյուջեի նախագծերի կազմման ժամանակ հիմք ընդունել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված ՄԺԾԾ-ի և բյուջեի մշակման մեթոդական ցուցումները:

2. ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի գիտական քաղաքականության վարչության պետ Ա. Ջավադյանին՝

1) ապահովել գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի 2020-2022 թթ. ՄԺԾԾ նախագծի մշակման համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրումն ու վերլուծությունը,

2) ապահովել ՀՀ կառավարության 2020 թ. բյուջետային ուղերձի գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին նախագծի մշակումը:

3. ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի գիտական գործունեության կազմակերպման վարչության պետ Ռ. Ասատրյանին՝

1) ապահովել 2020 թ. բյուջեի նախագծի մշակման համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրումը և վերլուծությունը,

2) ապահովել «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն 2020 թ. իրականացվելիք գիտական, գիտատեխնիկական պետական և նպատակային ծրագրերի մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի սահմանված կարգով ներկայացումը ՀՀ կառավարություն՝ մինչև սեպտեմբերի 20-ը:

4. ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնի պետ Տ. Գալստյանին՝

1) ապահովել ՀՀ գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի և ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի կառավարման ապարատի 2020 թ. բյուջետային ֆինանսավորման հայտերի հիմնավորում-բացատրագրի մշակումը,

2) ապահովել ՀՀ գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի և ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի կառավարման ապարատի 2020 թ. բյուջետային ֆինանսավորման հայտերի (ներառյալ ծրագրային բյուջետավորման ձևաչափով) կազմումը:

5. ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար Լ. Մարդոյանին՝ ՀՀ գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի 2020-2022 թթ. ՄԺԾԾ և 2020 թ. պետական բյուջեի նախագծերը համաձայնեցնել ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի նախագահի տեղակալ Վ. Սահակյանի հետ:

6. Սույն հրամանի կատարման ապահովումը հանձնարարել ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար Լ. Մարդոյանին:

7. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ